ԱՐՑԱԽԸ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ (ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՇՈՒՇԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեր օրերում ԶԼՄ-ները համարվում են հանրային կյանքի կարևորագույն ինստիտուտներից մեկը,որոնց միջոցով արագ և զանգվածայնորեն իրականացվում է տեղեկատվության տարածում՝ հանրությանը որոշակի կողմնորոշման բերելու ու նպատակային հանրային կարծիք ձևավերելու նպատակով: Այսօր մեդիաոլորտը ազդեցություն ունի գրեթե բոլոր ոլորտներում ու ինստիտուտներում, այդ թվում նաև՝ քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային:Սույն ուսումնասիրության նպատակն է վերհանել Արցախին առչվող հրապարակումները՝ փորձելով ընդգծել գերմանական պարբերականների քաղաքական ուղղվածությունը և դիրքորոշումը հարցի շուրջ:

Գերմանական պարբերականներից ամենահայտնի անդրադարձը Ղարաբաղյան հակամարտությանն առչվող խնդրին, որ հրապարակվել է վերջին շրջանում, նշված է հայտնի «Deutsche Welle» պարբերականում: Ընթացիկ տարվա ապրիլի 6-ին հրապարակված «Լեռնային Ղարաբաղ. Սառը հակամարտություն Կովկասում» հոդվածն է[1] , սա երկիր է, որտեղ հակամարտությունը ունի երկար ժամանակագրություն. Ամեն ինչ սկսվել է Հայաստանի և Ադրբեջանի միջև ծագած կոնֆլիկտից: Այնուհետև հեղինակը ներկայացնում է նաև ֆոտոշարք Արցախից և ամեն լուսանկարի հետ մեկտեղ նկարագրում նաև հակամարտության ներկա վիճակը: Լրագրողը նշում է, որ մի շարք տվյալներով հակամարտության ոչ խաղաղ կարգավորման արդյունքում մահացել է ավելի քան 30 000 մարդ: Իսկ հարյուրավոր փախստականներ պարզապես ստիպված են եղել թողել իրենց հարազատ բնակավայրը: Պարբերականն անդրադառնում է նաև հակամարտության կարգավորման ներկա շրջափուլում ԵԱՀԿ Մինսկի համանախագահող երկրի աշխատանքներին, նրանց կողմից անցկացվող դիտարկումներին թե՛ արցախյան և թե՛ ադրբեջանական կողմում:

Նույն պարբերականում կարելի է հանդիպել նաև հակամարտության կարգավորման վերաբերյալ այլ հրապարակումների: Օրինակ՝ «Ղարաբաղը եռյակում»[2] հոդվածի մեջ նշվում է, որ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի և Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպումը հնարավորություն է, որպեսզի իրատեսորեն գնահատվեն հակամարտության խաղաղ կարգավորման հնարավորությունները: Պարբերականը նշում է, որ եռակողմ հանդիպումներն ունեն ստրատեգիական նշանակություն: Դրանք ընթանում են նախապես մշակված սցենարով և ներկայացվում հանրության դատին:

Գերմանական պարբերականներն ուշադրության կենտրոնում էին պահել նաև 2016 թվականի ապրիլը՝ ամենօրյա լրահոսում ունենալով լուրեր հենց հակամարտության երկու կողմերից և մեկնաբանություններ ամենատարբեր

[1]http://www.dw.com/ru/%D0%BD%D0%B0%D0%B3%D0%BE%D1%80%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%_BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85-%D0%B7%D0%B0%D0%BC%D0%BE%D1%80%D0%BE%D0%B6%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B9-%D0%BA%D0%BE%D0%BD%D1%84%D0%BB%D0%B8%D0%BA%D1%82-%D0%BD%D0%B0-%D0%BA%D0%B0%D0%B2%D0%BA%D0%B0%D0%B7%D0%B5-%D1%84%D0%BE%D1%82%D0%BE%D0%B3%D0%B0%D0%BB%D0%B5%D1%80%D0%_B5%D1%8F/a-43276824

[2]http://www.dw.com/ru/%D0%BA%D0%BE%D0%BC%D0%BC%D0%B5%D0%BD%D1%82%D0%B0%D1%80%D0%B8%D0%B9-%D0%BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85-%D0%BD%D0%B0-%D1%82%D1%80%D0%BE%D0%B8%D1%85/a-19344924

քաղաքական գործիչների կողմից: 2016 թվականի ապրիլի 4-ին «Deutsche Welle» պարբերականը ներկայացրել է ծավալուն հոդված՝ սկսած ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը տեղի ունեցող իրադարձություններից[1]: Պարբերականը նշում է, որ ապրիլի 2-ին ադրբեջանա-ղարաբաղյան շփման գծում իրավիճակը լարվել է, դեռ ավելի սկսվել է պատերազմ և հակամարտող կողմերը չեն պատրաստվում հրադադարի:

Յուրաքանչյուր պետության համար կարևոր է այն,թե ինչպես է նրա սահմաններից դուրս ընկալում և ներկայացնում նրա ներկան ու այսօրը, քանի որ այս դեպքում փոխվում է ոչ միայն տեղակատվության աղբյուրը, այլ նաև՝ հասցեատերը:

Մինչև 2018 թվականը,միջազգային հեղինակավոր մեդիահարթակում Արցախն գլխավորապես ներկայացվում էր հետևյալ երեք ասպեկտներում.

ա/ Արցախը որպես հակամարտող կողմ,[2]

բ/ Արցախը որպես տուրիստական երկիր,

գ/ Արցախը որպես հոգևոր-մշակութային օջախ,

Ի տարբերություն նախորդ տարիների թեմատիկ սահմանափակումների, միջազգային լրահոսում (մինչ սույն գիտական հոդվածի իրականացումը) Արցախին առչվող զանգվածայնորեն տարածված տեղեկատվական սյունակները առավելապես թեթև լուրեր էին[3]: Այսպես, օրինակ գերմանական հեղինակավոր «SPIEGELA» պարբերականում տեղ գտած Ֆիոնա Էիլերսի հեղինակած «Կովկասի կանանց աշխարհը: Լեռնային Ղարաբաղի մեծ փորձը» (Woman's World in the Caucasus. Nagorno-Karabakh's Grand Experiment»[4]) վերտառությամբ հոդվածում ընթերցում ենք Կովկասում ապրող կամային ուժեղ հատկանիշներով օժտված հայ կնոջ հավաքական կերպարի մասին: Հոդվածի լիդը այսպիսինն է. «Կովկասում գտնվող այս փոքր, չճանաչված երկիրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, խորապես հայրապետական է: Սակայն վերջին մի քանի տարիների ընթացքում ավելի ու ավելի շատ կանայք են առաջադրվել իշխանության, դատական և բուհական համակարգերի ղեկավար պաշտոններում: Եվ այս զարգացումը փոխել է երկիրը[5]:

Հեղինակն վստոհորեն այն համոզմունքն է հայտնում,որ պատերազմը հերթական անհաջող փորձակումն էր,որով ստիպված անցել է տարածաշրջանի բնակչությունը:Հոդվածի գլխավոր հերոսները Արցախում գործունեություն ծավալող երեք կանայք են (ԼՂՀ ԱԳ փոխնախարար Արմինե Ալեքսանյան, ԱՀ կրթության և գիտության նախարար Նարինե Աղաբալյան, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյան), որոնցից յուրաքանչյուրին հեղինակը անդրադառնում է իրենց գործունեության ոլորտներում ունեցած հաջողությունների համատեքստում, գրելով՝ «Լեռնային Ղարաբաղում կանայք ինքնհաստատվում են զգուշությամբ ու ռազմավարական հմտությամբ»:

Որպես մուլտիմեդիա հավելված հոդվածին կից ներկայացված է Կառլ Մանչինի «The Strong Women of Nagorno-Karabakh» վերտառությամբ 10 նկարից

---

[1] http://www.dw.com/ru/%D0%BD%D0%B5%D0%BC%D0%B5%D1%86%D0%BA%D0%B8%D0%B5-%D1%81%D0%BC%D0%B8-%D0%BA%D0%BE%D0%BD%D1%84%D0%BB%D0%B8%D0%BA%D1%82-%D0%B2-%D0%BD%D0%B0%D0%B3%D0%BE%D1%80%D0%BD%D0%BE%D0%BC-%D0%BA%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85%D0%B5-%D0%BD%D0%B0%D1%87%D0%B0%D0%BB%D0%BE-%D0%B2%D0%BE%D0%B9%D0%BD%D1%8B-%D1%87%D1%83%D0%B6%D0%B8%D0%BC%D0%B8-%D1%80%D1%83%D0%BA%D0%B0%D0%BC%D0%B8/a-19162427

[2] Որոշ դեպքերում հակամարտող կողմին ավելացվում էր նաև

[3] soft news-այստեղ կարևոր է նորույթի մարդկային հետաքրքրության, գրավչության տարրերը: Դրանք ավելի շատ նկարագրում են ոչ թե իրադարձությունը, այլ իրավիճակը կամ գործընթացը: Օպերատիվության գործոնը «թեթև» լուրերում այնքան կարևոր չէ, որքան «ծանր» լուրերում:

[4] Ի դեպ հոդվածում մի քանի անգամ օգտագործվում է Արցախ տեղանունը

[5] http://www.spiegel.de/international/world/women-take-charge-in-nagorno-karabakh-a-1201390.html.

բաղկացած ֆոտոռեպորտաժը[1], որտեղ լուսանկարիչը պատկերել է Արցախ կատարած իր այցի ֆոտոհաշվետվությունը:

Եթե փորձենք վերը նշված մի քանի հոդվածների միջոցով պատկերացում կազմել Արցախին ու ղարաբաղյան հակամարտության հիմնախնդրի շուրջ գերմանական պարբերականների դիրքորոշման մասին, ապա պետք է նշել, որ դրանք հիմնականում վերաբերում էին խաղաղ կարգավորման բանակցային գործընթացին: Նյութերը ներկայացված էին հոդվածների, մեկնաբանության տեսքով: Լուրի ժանրը ակնհայտ տեսանելի էր հատկապես 2016 թվականի ապրիլին և դրան հաջորդած օրերին: Գերմանական պարբերականները քաղաքական գնահատականներ շատ հաճախ չեն էլ հնչեցնում՝ զերծ մնալով ավելորդ «գլխացավանքից»: Սակայն ակնհայտ է, որ պարբերականների համար ղարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը շարունակում է մնալ դեռևս լիովին չբացահայտված, քանի դեռ հակամարտությունը առայժմ հանգուցալուծում չի ստացել:

Շուշան Խաչատրյան

ԱՐՑԱԽԸ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ (ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Բանալի բառեր՝ *Արցախյան խնդիր, գերմանական մամուլ, մեդիադաշտ, հակամարտություն,պարբերականներ*

Հոդվածը ներկայացնում է արցախյան խնդրի ընկալումներն գերմանական հեղինակավոր պարբերականներում՝ խնդրի ներկայացման պատմությունը սկսելով 2016 թվականի ապրիլյան սրացումից: Կարևորելով զանգվածային մեծ լսարան ունեցող սույն պարբերականների վարած տեղեկատվական-քարոզչական քաղաքականությունը և արցախյան հակամարտության շուրջ ծավալվող ուղեգծի մեկնաբանումները, ուրվագծվում են լրագրային արձագանքների հիմնական օրինաչափությունները և գերմանական մեդիադաշտի կողմից արցախյան խնդրի ընկալումների հիմնական առանձնահատկությունները:

Shushan Khachatryan

THE PERCEPTION OF THE ARTSAKH PROBLEM BY THE AMERICAN AND BRITISH MAGAZINES

Keywords: *Artsakh problem,German press, mediafield, conflict, periodical*

The article presents the perception of the Artsakh issue by famous German magazines starting from history of this problem since the escalation of the situation in April of 2016.

The importance of the information and propaganda policy of these newspapers which has a huge audience and comments of the Artsakh conflict are emphasized in the article, besides the main regularities of journalistic reviews and the main features of the perception of the conflict by German media are revealed.

[1] http://www.spiegel.de/fotostrecke/photo-gallery-the-strong-women-of-nagorno-karabakh-fotostrecke-159780.html

Шушан Хачатрян

АРЦАХ НА СТРАНИЦАХ АВТОРИТЕТНЫХ ИЗДАНИЙ (НА ПРИМЕРЕ НЕМЕЦКОЙ ПРЕССЫ)

Ключевые слова: *Арцахский вопрос, немецкая пресса, медиаполе, конфликт, периодика*

В статье представлено восприятие арцахского вопроса известными немецкими журналами, с охватом истории данной проблемы с периода обострения ситуации в апреле 2016 года. Подчеркивается важность информационно-пропагандистской политики этих изданий, имеющих огромную аудиторию, и комментарий вокруг арцахского конфликта, выявляются основные закономерности журналистских отзывов и особенности восприятия конфликта в немецком медиаполе.